11-02,12-03-2024

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

« » 2024 թ. N

*Ձեր 06.02.2024
թիվ 08-01*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Ասատրյան,

Գրությամբ արծարծված 1-ին և 2-րդ հարցերով նշված տեղեկատվությանը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի տիրապետում:

Գրությամբ արծարծված 3-րդ հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու մասին հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) հիմքով 2021-2023թթ. ժամանակահատվածում դադարեցվել է 139866 անձի կենսաթոշակի վճարում:

Գրությամբ արծարծված 4-րդ հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ կենսաթոշակի վճարումը դադարեցված գործերից (անկախ վճարումը դադարեցնելու ամսաթվից) 2021-2023թթ. ժամանակահատվածում վերականգնվել է 147790 անձի կենսաթոշակի վճարում, որից 129386 անձի կենսաթոշակի վճարումը դադարեցված է եղել 2021-2023թթ. ժամանակահատվածում:

Գրությամբ արծարծված 5-րդ հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ դրանով ներկայացված տեղեկատվության մասով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը վիճակագրություն (հաշվառում) չի իրականացնում:

ՀՀ, Երևան 0010, Կառավարական տուն 3, հեռ.՝ (+374 10) 520 830, www.mlsa.am, info@mlsa.am

Գրությամբ արծարծված 6-րդ հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 12.05.2005թ N 938-Ն որոշման շրջանակում ձևավորված անձնական (անձնավորված) հաշվառման շտեմարանն առկա է և դրանում ներառված տվյալների կիրառման համար մշակվել և ներդրվել է ծրագրային գործիք, որով ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը համապատասխան իրավասություն ունեցող մասնագետներին:

2/23/2024

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կատ.՝ Արմեն Հովհաննիսյան
կենսաթոշակային ապահովության
և այլ դրամական վճարների վարչություն
010 54 27 96